Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՌԵԿՏՈՐ

Թիվ 1019-Լ «31» 03 2021թ.

ՀՐԱՄԱՆ

Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀՊՄՀ-ՈՒՄ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԽԱՂԵՐԻ, ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ, ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ, ԾՐԱԳՐԵՐԻ, ՄՈԴՈՒԼՆԵՐԻ, ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ, ՈՒՂԵՑՈՒՅՑԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 4-ի թիվ 138-Ն որոշմամբ հաստատված «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 54-րդ կետով և հիմք ընդունելով Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Գիտական խորհրդի 2021 թվականի մարտի 30-ի նիստի N 7–Լ որոշումը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել վարձավճարներ.

1) Մանկական գրականության փորձաքննություն՝ մինչև 1 մամուլ - 10.000, մինչև 2 մամուլ - 20.000, մինչև 3 մամուլ - 30.000 ՀՀ դրամ:
2) Յուրաքանչյուր մանկական խաղի փորձաքննության համար - 10.000 ՀՀ դրամ:
3) Մրցույթներին ներկայացված յուրաքանչյուր հայտի փորձաքննության համար - 10.000 ՀՀ դրամ:
4) Հայեցակարգային նախագծի, ծրագրի, մոդուլի փորձաքննության համար - 15.000 ՀՀ դրամ:
5) Չափորոշչի, ուղեցույցի փորձաքննության համար - 30.000 ՀՀ դրամ:

2. Փորձաքննությունների նախանշված վճարների գումարները հարկելուց և այլ վճարումներ կատարելուց հետո փոխանցել փորձագետների հաշվեհամարներին:

3. Գլխավոր հաշվապահին՝ կատարել սույն հրամանից բխող անհրաժեշտ գործողությունները:

ՌՈՒԲԵՆ ՄԻՐՋԱԽԱՆՅԱՆ